# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
# ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թ.**

**N 1- Ն, 2- 6 -Ա**

Գ.ԿՈՂԲ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ.Կողբ
փողոց 52, թիվ 1, հեռ. 0266 -5-21-90 , էլ. փոստ koghb.tavush@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

18 հունվարի 2019թ N 1 –Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՃՇՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ԵՌԱՄՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Հայաստանի Հանրապետության <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով

## ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբ համայնքի 2019թ. բյուջեն՝
ա/ եկամուտների գծով՝ 154766,1 հազար դրամ,
բ/ ծախսերի գծով՝ 155299,9 հազար դրամ,
գ/ դեֆիցիտի ծածկմանն ուղղված միջոցներ՝ 533,9 հազար դրամ:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ (հատված 1):
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման՝ (հատված 2):
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 3):
5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ (հատված 4):
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ (հատված 5):
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 6):
8. Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

9. Թույլատրել համայնքի ղեկավարին.

ա/գանձապետական հաշվի 2017 թվականի տարեվերջյան ազատ մնացորդն ինքնուրույն ներառել 2018 թվականի բյուջեի եկամտային մասում և ծախսային մասում ընդգրկել առաջնահերթություն պահանջող ծախսերի ֆինանսավորման համար,

բ/ հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետը, համայնքի բյուջեում կատարել փոփոխություններ, որոնց հանրագումարը չի կարող գերազանցել հաստատված ծավալի 15-%ը:

10.Սույն որոշումը <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջների կարգով պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

11.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օր վան հաջորդող 10-րդ օրը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

| | | | |
|---|---|---|---|
| ԱԲՈՎՅԱՆ ԱԼԻԿ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ԱԲՈՎՅԱՆ ԷՌՆԵՍՏ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ԱԲՈՎՅԱՆ ԱՐՄԵՆ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ԲԱՂԻՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ԱՋԱՏՅԱՆ ԱՐՄԵՆ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ Կողմ ------------ Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ Կողմ ------------ Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

ՋԱՂԻՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ Կողմ ------------ Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

Կողմ -- 6
Դեմ --0
Ձեռնպահ –0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ

18.01.2019թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ.Կողբ
փողոց 52, թիվ 1, հեռ. 0266 -5-21-90 , էլ. փոստ koghb.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

18 հունվարի 2019թ N 2 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 _ 2020 ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբ համայնքի 2019 -2020թթ տարվա զարգացման ծրագիրը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

| | | | |
|---|---|---|---|
| ԱԲՈՎՅԱՆ ԱԼԻԿ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ԱԲՈՎՅԱՆ ԷՌՆԵՍՏ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ԱԲՈՎՅԱՆ ԱՐՄԵՆ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ԲԱՂԻՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ԱԶԱՏՅԱՆ ԱՐՄԵՆ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ Կողմ ---------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ Կողմ ---------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

ՁԱՂԻՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ Կողմ ---------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

Կողմ -- 6

Դեմ --0

Ձեռնպահ –0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ

18.01.2019թ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ. Կողբ
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

18 հունվարի 2019թ N 3 –Ա

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով

### ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1 և 2 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Կողբ համայնքի ավագանու 2018թ դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 52-Ա որոշման N1 և 2 հավելվածները:

3. Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին:

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին նորմատիվ իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

| | | | |
|---|---|---|---|
| ԱԲՈՎՅԱՆ ԱԼԻԿ | Կողմ ---------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ԱԲՈՎՅԱՆ ԷՌՆԵՍՏ | Կողմ ---------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ԱԲՈՎՅԱՆ ԱՐՄԵՆ | Կողմ ---------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ԲԱՂԻՅԱՆ ՄԵԴՐԱԿ | Կողմ ---------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ԱԶԱՏՅԱՆ ԱՐՄԵՆ | Կողմ ---------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ | Կողմ ---------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ | Կողմ ---------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ | Կողմ ---------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՋԱՂԻՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ | Կողմ ---------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |

Կողմ -- 6
Դեմ --0
Ձեռնպահ –0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ

18.01.2019թ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ
2019թ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի
N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

## ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

### 1.ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ , ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա.Ղ.ԱՂԱԲԱՔՅԱՆ

18 հունվարի 2019թ

ԿՈՂԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՀՀ ՏԱՎՈՒՇ ՀՀ *07619249*

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 18.01.2019Թ.
№3-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 23

## 2. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը ( դրամ ) |
|---|---|---|---|
| | ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 336000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 200000 |
| 3 | Վարչական ղեկավար | 1 | 195000 |
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 185000 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 195000 |
| | ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ,ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ,ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆ | | |
| 1 | Ֆին. բաժնի պետ 2.1-2 | 1 | 185000 |
| 2 | Ֆին. բաժնի առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 134000 |
| 3 | Ֆին. բաժնի առաջատար մասնագետ-գանձապահ 3.1-2 | 1 | 134000 |
| 4 | Ֆին. բաժնի 1-ին կարգի մասնագետ 3.2-1 | 1 | 132000 |
| 5 | Ֆին. բաժնի 2-րդ կարգի մասնագետ3.3-1 | 1 | 106000 |
| | ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՉՆԵՐԱՌՎԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 1 | Աշխատակազմի առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 134000 |
| 2 | Աշխատակազմի առաջատար մասնագետ 3.1-4 | 1 | 134000 |
| 3 | Աշխատակազմի առաջատար մասնագետ 3.1-5 | 1 | 134000 |
| 4 | Աշխատակազմի առաջատար մասնագետ 3.1-6 | 1 | 134000 |
| | ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ | | |
| 1 | Անասնաբույժ | 1 | 90000 |
| 2 | Համակարգչային օպերատոր | 1 | 134000 |
| 3 | Համակարգչային սարքեր սպասարկող | 1 | 134000 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 1 | Վարորդ | 1 | 130000 |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | Գործավար | 1 | 80000 |
| 3 | Հավաքարար | 1 | 77903 |
| 4 | Հավաքարար | 1 | 72751 |
| 5 | Պահակ | 1 | 72751 |
| 6 | Պահակ | 0.5 | 72751 |
| | Ընդամենը | | 3165780 |

ԿՈՂԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Ե.ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ. Կողբ
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am


# ՈՐՈՇՈՒՄ

18 հունվարի 2019թ N 4 –Ա

## ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Լսելով 2018թ բյուջեի կատարման մասին Կողբ համայնքի ղեկավարի հաշվետվությունը, ավագանին նշում է որ 2018թ բյուջեն կազմվել է համայնքի 2017 – 2021թթ քառամյա զարգացման ծրագրով բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա և օրենսդրությամբ սահմանված կարգով, ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը:
Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո համայնքի ղեկավարը սահմանել է բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, բյուջետային օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում հաստատել համայնքային ենթակայության բյուջետային կազմակերպությունների պահպանման ծախսերի նախահաշիվները:
2018թ բյուջեի ձևավորման աղբյուրների և նրա եկամտային մասի գնահատումը իրականացվել է տեղական ներքին ռեսուրսների ներգրավման, նախորդ տարիների թերությունների և բացթողումների վերլուծության հիման վրա:
Կցվում է 2018թ բյուջեի կատարողականի համեմատական վերլուծությունը 2017թ բյուջեի կատարողականի և 2018թ բյուջեով նախատեսված հատկացումների հետ:
Համայնքի բյուջե 2018թ եկամուտների և ծախսերի կատարման վերլուծությունը ցույց է տալիս է, որ 2018թ բյուջեի եկամուտները կատարվել են 96.8%-ով:

| Հ/հ | ՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2017թ. փաստ. | 2018թ. հաստ. | 2018թ. փաստ | 2018թ. 2017թ. նկատ. % | 2018թ. նկատ. % |
|---|---|---|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ | 128878,7 | 140110.1 | 146805.8 | 113.9 | 96.8 |
| 1 | Հողի հարկ | 4814,6 | 8825,0 | 4805.1 | 99.8 | 54.4 |
| 2 | Գույքահարկ | 17371,4 | 17814 | 18438.1 | 106.1 | 103.5 |
| 3 | Տուրքեր | 598,0 | 527,3 | 504.7 | 84.4 | 95.7 |
| 4 | Պաշտոնական դրամաշնորհներ | 99816,1 | 97101,8 | 97101.8 | 97,3 | 100 |
| 5 | Այլ եկամուտներ | 5161,3 | 15842,0 | 15400.8 | 298 | 97.2 |
| 6 | Կապիտալ դրամաշնորհներ | | | | 0,0 | 100 |
| 7 | Հավելուրդ/պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներ | | 11322,9 | 11322.9 | | 1,5 |

Տվյալների վերլուծությունից պարզվել է .

2018թ՝ համայնքի վարչական բյուջեի եկամուտներ է նախատեսվել 140110.1 հազ.դրամ ,որից սեփական եկամուտներ 43008.3 հազ.դրամ :Սեփական եկամեուտների հավաքագրման մեջ կարևոր տեղ է զբաղեցնում տեղական վճարները, որի ուղղությամբ 2017թ նկատմամբ հավաքագրվել է գրեթե 3անգամ ավել եկամուտ, չի հավաքագրվել աղբահանության վճարների, չի ավարտվել Կողբ և Ջորական բնակավայրերի բնակչության հետ աղբահանության պայմանագրերի կնքումը:

Չի հավաքագրվել Ջորական բնակավայրի հողի հարկը,որը էական ազդեցություն է ունեցել ընդհանուր բյուջեի կատարողականի վրա : Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվել է 92434.3 հազ. դրամ դոտացիա, պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ / սուբվենցիա/՝4667.5 հազ.դրամ, համայնքին տրամադրվել է նաև կապիտալ դրամաշնորհ 5989.0 հազ դրամ քաղաքացիների սպասարկման գրասենյակի հիմնադրման և 5575.7 հազ դրամ Ջորական բնակավայրի խմելու ջրագծի կառուցապատման նպատակով :

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

*ա) ըստ գործառական դասակարգման*

| Հ/հ | ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2017թ. փաստ. | 2018թ. հաստ. | 2018թ. փաստ | 2018թ 2017թ նկատ.% | 2018թ նկատ.% |
|---|---|---|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 138617 | 162997.7 | 157594.9 | 87.2 | 96.7 |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 56277,2 | 50736 | 49114.3 | 97,0 | 96.8 |
| 2 | Պաշտպանություն | | | 0 | | |
| 3 | Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն | | | 0 | | |
| 4 | Տնտեսական հարաբերություններ | 40 | -2484.6 | -2484.6 | 0 | 0 |
| 5 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 14196 | 16737 | 16667.9 | 117.4 | 99.6 |
| 6 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 1799,1 | 23813.2 | 23727.9 | 131.9 | 99.6 |
| 7 | Առողջապահություն | | | | | |
| 8 | Հանգիստ, մշակույթ և կրոն | 15681,9 | 15617.1 | 14903 | 95 | 95.1 |
| 9 | Կրթություն | 49048 | 57266 | 55289.2 | 116.8 | 96.5 |
| 10 | Սոցիալական պաշտպանություն | 1430 | 1006 | 975 | 68.1 | 96.9 |
| 11 | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր | 144,5 | 307 | 307 | 662,3 | 209,0 |

*բ) ըստ տնտեսագիտական դասակարգման*

| Հ/հ | ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2017թ. փաստ. | 2018թ. հաստ. | 2018թ. փաստ | 2018թ 2017թ նկատ.% | 2018թ նկատ.% |
|---|---|---|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 138618 | 162997.7 | 157594.8 | 113.7 | 96.7 |
| Ա | *ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ* | | | | | |
| 1 | Աշխատանքի վարձատրություն | 35350,6 | 34500 | 34036.8 | 96.2 | 98.6 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում | 11993,1 | 13840 | 11895 | 99.1 | 85.9 |
| 3 | Տոկոսավճարներ | | | 0 | | |
| 4 | Սուբսիդիաներ | 77594,9 | 88170.1 | 85700.2 | 110.4 | 97.2 |
| 5 | Դրամաշնորհներ | 851 | 2087 | 2087 | 245,2 | 100 |
| 6 | Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 1430 | 1006 | 975 | 68.1 | 96.9 |
| 7 | Այլ ծախսեր | 234 | 507 | 182.2 | 77.9 | 35.9 |
| Բ | *ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ* | 11164,4 | 0 | 1880 | 0,0 | |
| 1 | Հիմնական միջոցներ | 11164,4 | 22887.6 | 22717.9 | 0,0 | |
| 2 | Պաշարներ | | | 0 | | |
| 3 | Բարձրարժեք ակտիվներ | | | 0 | | |
| 4 | Չարտադրված ակտիվներ | | | | | |
| Գ | *ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ* | 0 | -4012 | -4012 | | |
| 1 | Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | -4012 | | |
| 2 | Պաշարների իրացումից մուտքեր | | | 0 | | |
| 3 | Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր | | | 0 | | |
| 4 | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | 0 | | |

Վերլուծություն է կատարվել ծախսերի ինչպես գործառական այնպես էլ տնտեսագիտական դասակարգման գծով:

Բյուջեի ծախսային մասի համեմատական վերլուծությունից երեվում է, որ բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել են 96.7օ/օ-ով: Առանձին ծախսատեսակների ուսումնասիրությունից պարզվում է, որ 2017թ նկատմամբ համայնքի արդյունավետ աշխատանքի շնորհիվ բավականին աշխատանքներ են կատարվել համայնքի զարգացման ուղղությամբ:Ավելացել են կրթությանը, գիշերային լուսավորությանը, ջրամատակարարմանն ուղղված հատկացումները: Ներդրումներ են կատարվել ՀՏԶՀ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում տեխնիկայի հատկացման ծրագրին, կառուցվել 4կմ երկարությամբ Զորական բնակավայրի խմելու ջրի ջրագիծ, կառուցվել է Կողբ բնակավայրի Անկեսուր թաղի խմելու ջրի ջրագիծ, վերակառուցվել և կահավորվել է քաղաքացիների սպասարկման գրասենյակը:

Ավագանին նշում է նաև որ բյուջետային տարում թույլ հսկողություն է իրականացվել հաշվապահական հաշվառման և համայնքային ենթակայության կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ, սեփական եկամուտների հավաքագրման գործում բավարար չափով չեն օգտագործվել վարչարարության լծակները:

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել 2017թ. բյուջեի կատարման մասին Կողբ համայնքի ղեկավարի հաշվետվությունը:

2. Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին.

2/1. 2017թ. արձանագրված թերությունները և բացթողումները վերացնելու, դրանք ընթացիկ բյուջետային տարում չկրկնելու համար սահմանել աշխատանքի ծրագիր և բյուջեի կատարման ընթացքի մասին եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն պահանջել ՏԻՄ ֆինանսական ծառայությունից և հաղորդում ներկայացնել համայնքի ավագանուն,

2/2. Ուժեղացնել հսկողությունը բյուջեի մուտքերի նկատմամբ, մուտքերը ցածր լինելու դեպքում քայլեր ձեռնարկել պատճառները հայտնաբերելու և իրավիճակը շտկելու համար,

2/3.Հսկողություն սահմանել նաև ծախսերի կատարման նկատմամբ,պարզել ծախսային իրադրությունը, կրճատել կենսական նշանակություն չունեցող ծախսերը,

2/4.Ուժեղացնել հսկողությունը հաշվապահական հաշվառման և համայնքային ենթակայության կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումը օրենքով սահմանված ժամկետում ներկայացնել Տավուշի մարզպետարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

| | | | |
|---|---|---|---|
| ԱԲՈՎՅԱՆ ԱԼԻԿ | Կողմ ---------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ԱԲՈՎՅԱՆ ԷՌՆԵՍՏ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ԱԲՈՎՅԱՆ ԱՐՄԵՆ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ԲԱՂԻՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ԱԶԱՏՅԱՆ ԱՐՄԵՆ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ՋԱՂԻՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |

Կողմ -- 6

Դեմ -0

Ձեռնպահ --0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԱՂԱԲԱԲՅԱՆ

18.01.2019թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ. Կողբ
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

18 հունվարի 2019թ N 5 –Ա

## ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով <<Արխիվային գործի մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Մինչև 2016թ Կողբի համայնքապետարանի արխիվային փաստթղթերը՝

1) Կողբ համայնքի ավագանու որոշումները
2) Կողբ համայնքի ղեկավարի որոշումները
3) Կողբ համայնքի ղեկավարի կարգադրությունները
4) Մտից գրությունները
5) Ելից գրությունները
6) Քաղաքացիներից ստացված նամակները, զանգատներ, բողոքները
փոխանցել պետական արխիվ:

2.Հանձնարարել Կողբի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին/Ա.Ե.Ղուլիջանյան/.

Նշված փաստաթղթերը հանձնելու համար պետական մարմնի հետ կազմել համապատասխան արձանագրություն:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

| | | | |
|---|---|---|---|
| ԱԲՈՎՅԱՆ ԱԼԻԿ | Կողմ ------------ | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ԱԲՈՎՅԱՆ ԷՌՆԵՍՏ | Կողմ ------------ | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ԱԲՈՎՅԱՆ ԱՐՄԵՆ | Կողմ ------------ | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ԲԱՂՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ | Կողմ ------------ | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ԱԶԱՏՅԱՆ ԱՐՄԵՆ | Կողմ ------------ | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ | Կողմ ------------ | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ | Կողմ ------------ | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ | Կողմ ------------ | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՋԱՂՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ | Կողմ ------------ | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |

Կողմ -- 6

Դեմ -0

Ձեռնպահ --0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ

ԿՈՂԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՏԱՎՈՒՇ ՀՀ *07619249*

18.01.2019թ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ. Կողբ
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

18 հունվարի 2019թ N 6 –Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 11 – 041 – 0067 – 0024 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.04464ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21/-րդ կետի և ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով

### ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Համաձայնել Կողբ համայնքի ղեկավարի առաջարկին՝համայնքային սեփականություն հանդիսացող 11-041-0067 - 0024 կադաստրային ծածկագրով 0.04464 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողի աճուրդ –վաճառք հայտարարելու մասին:
Աճուրդի դրվելիք հողամասի մեկնարկային գին սահմանել 99500 դրամ, սակարկությունների ժամանակ քայլի չափ՝ 1000 դրամ:

2. Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին.
Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարություն հրապարակել աճուրդի անցկացման տեղի ու ժամանակի, հողամասի գտնվելու վայրի, աճուրդին ներկայացվող այլ պայմանների և պահանջների մասին:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

| | | | |
|---|---|---|---|
| ԱՐՈՎՅԱՆ ԱԼԻԿ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| ԱՐՈՎՅԱՆ ԷՌՆԵՍՏ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| ԱՐՈՎՅԱՆ ԱՐՄԵՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| ԲԱՂԻՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| ԱԶԱՏՅԱՆ ԱՐՄԵՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| ՋԱՂԻՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |

Կողմ -- 6

Դեմ -0

Ձեռնպահ --0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՂԱԲԱՐՅԱՆ

18.01.2019թ